

ամենայն կենդանութեան» յէջ 11. Իսկ յէջ 12 « և քան զամենայն անդամն մարդուն մասնեւորուն կաշին Մօճքատիլ է աւելի և քան զայս աւելի այլ մօճքատիլ իրը չի կայ » : Եւ յէջ 18, կը գտնենք Պաւստասն որ նշնայէս մեզ անծանօթ մնացած է. « Իւ բնութեան յուսնի ի պաշտպն լինի, որ է զ(ն)սպասն, և պաշտպն այն տեղեացն ասեն, որ զաքոն ի ստամոքէն յաղիքն կու զրկէ » : Այս բացատրութիւնէն կարելի է ենթադրել որ լինի միող զօրութիւն մը :

Ալլո. (յէջ 18) անտարակոյս պէտք է լինել հոմանիշ ի բառարանս զանուած Ազոսանք (զիզուած սպոր) բառին. և արդէն ի բժշկարանին Առո բառը մի և նոյն իմաստով զարժանուած է :

Աղէճորտ. զործածուած է իրբեւ տնտն աւանայն աղեաց. և այս բառն ալ կը պակտի ի բառարանս :

Շարայարեշի

Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ



ՍԱԳՆԻՍԱԿԱՆ ԲՈՒՆ

HYPERNOTISME

(Շար. տես էջ 331-1900)

Պ

ՅԱՃԱՆԱԳՈՅՆ Հանդիպելի զէպը մ'է բնական ընդ ի մագնիսական քուն փոփոխել : Զայդ բացատրենք Հետեւեալ զէպը՝ զոր Պերնիչայմ կը պատմէ.

« Հիւանդանոցի ծառայութեան մէջ թորտախտաւոր մը կը քնանար բնական քնով. զանկէպ երբեք չէի մագնիսացուցած : Միեւնով ձեռքը շօշափելով ըսի իրեն. « Մի արթնար. քնացիր. Շարունակէ՛ քունդ. »

Զկարենաս արթննալ » : Երկու վայրկեան ետքը, անոր երկու թեւերը վեր վերցուցի. — ուղղադարութեան մէջ էր նա : Ապա թուղուցի զինքը ըսելով թէ յետ երեք վայրկեանի արթննայ : Արթննալէն սակաւ ժամանակ ետքը՝ եկայ խոսակցելու Հետը. նա բան մ'ալ չէր յիշեր եղածէն : Աստիկ բնական կերպով քնացողին Հետ կրցայ յարաբերութեան մէջ մտնել. և այդ բնական քունը փոփոխեցաւ մագնիսականի » :

Իսկ Փիլլըր կը գրէ. « Օ. Պերսէի փորձերն, զորս հաստատուած է Նշլայտէն ալ, կը ցուցնեն » որ կարելի է բնական քունը փոխել ի մագնիսական այնպիսի կերպով, որ ամենեւին ծանօթութիւն չունենան քնոյ ենթարկեալ անձինք : Նոյն Պերսէ կրցաւ կատարել այս փոփոխութիւնը՝ բռնելով իրեն տաք ձեռքը սակաւի մի Հետու խոր քնացողներուն գլխէն, և կամ կեդրոնացընելով անոնց վրայ միաբեւեռ անընդհատ ընտանք » :

Արդէն իսկ Նուալէ զօրովաւ հրաժ էր այդ փորձը : Խորին քուն եղողներուն քով մօտենալով, անոնց ճակտին կամ ստամոքսին արտաքին խոռոչին վրայ մեղմով կը գնէր իւր մատը : Քանի մը վայրկեան ետքը՝ անոնց հարցումներ կ'ընէր, որք յաճախ առանց արթննալու կը պատասխանէին, և քնաշրջութեան նշաններ կու տային : Եւ այս բանս ստուգած են շատ անգամ Լիւպօլ, Տէլպէօֆ, Ֆօրէլ, Պայլի, Ռիթա :

Թուի թէ այս ամէն ստուգուած իրողութիւնը մեծապէս պիտի ամփոփեն Պերսէի վերոյիշեալ նշանաւոր իմաստը. « Մագնիսական վիճակն իւր շրջանաց և ոչ միոյն մէջ կրնայ սահմանուիլ՝ եթէ անոր ենթարկուած անձին հաւանութիւնն չըլլայ . . . : Ոչ որ կրնայ երբեք ենթարկուիլ այդ քնոյ առանց իրեն ազատ հաւանութեան » :

Զհամարենք՝ թէ միայն բնական քունը կը փոխարկուի ի մագնիսական քուն, վասն զի անզգայացուցիչ քունն ալ կարելի է փոխել նոյնպէս ի մագնիսական : Ապտոն Սանքլէ Հէրբերյ՝ վայրատալիտէն, այս մասին ճշգրտոյն ծանօթութիւններ տալով կը հաստատէ այս իրողութիւնը բազմաթիւ և հաստատի փորձերով Հետեւեալ պատմութիւնն

կը պարզէ անոր գործադրած կերպը և ընդունած արգասիքը՝

Օր մը այդ վերոյիշեալ բժշկին կը ներկայանայ Հիւանդ մը խնդրելով իրմէ՝ որ օգտակար համարուած դարմանը ընէ, բաց ի մագնիսակահուլթենէ, զոր աստատայական գործ կը համարէր։ Ընդհակառակն Հերբերոյ մագնիսական քունը միայն կարեւոր են թաղերով զինքը բժշկելու համար, հարկ համարեցաւ քնացընել հակառակ իրեն կամաց։ Ուստի առաջարկեց հիւանդին՝ որ զինքը անզգայացընէ քլոռակերպով, ըսելով՝ թէ իրեն բժշկութեան միայն դարման այդ է։ Հիւանդն զիջաւ։ Եւ տասնուհինգ կրամ քլոռակերպով՝ անզգայացուց զինքը հինգ վայրկենի մէջ։ Այս թելադրեց ես՝ որ հաւանք մագնիսութեամբ քնանալու։ Սոյն գործողութիւնը երեք անգամ կատարեց. չորրորդ օրն՝ ինքն հիւանդն խնդրեց՝ որ օգնութեան կերպով մագնիսացընէ զինքը. և այդպէս՝ երկու ամիս ամենայն դիւրութեամբ շարունակեց մագնիսական դարմանը. և Հերբերոյ օրըստօրէ միշտ միեւնոյն յաջողութեամբ յաճախեց իրեն փորձերը, և ըստ իրեն՝ բացարձակապէս ստույգ է հետեւեալն.

«Եթէ նախ անզգայացընենք զոր քլոռակերպով և ապա թելադրութիւնը գործադրենք այդ անզգայութեան ժամանակ, կրնանք միշտ մագնիսական քուն առաջ բերել, որչափ ալ կամայ կամ ակամայ՝ յանգէտ ընդդիմանայ քնանալի ենթական¹»:

Կը կընենք ներկայ գլուխը յաջորդ խորհրդածութեամբը:

Նախ՝ անոնք որ փայլ ռնին իրենց և այլոց ապահովութեան մասին, պարտաւորեալ են գիտնալ և ուրիշներուն ալ սորվեցընել այն ամէն զեղծումները՝ որոնց առիթ կամ գործի կրնայ ըլլալ մագնիսական քունն։ Վասն զի վասնզէ մը ազատ ըլլալու առա-

ջին և կարեւոր հնարքն է ճանչնալ կանխապէս վտանգը և զգուշանալ անկէ։

Երկրորդ, պէտք չէ շափազանցօրէն ըմբռնել և նկարագրել, ինչպէս կ'ընեն ոմանք, այն վտանգը որ կրնայ առաջ գալ մեր կամաց հակառակ քնանալին։

Երրորդ, այս վտանգէն ազատ մնալու համար, գործադրէ՝ օոսկ այս երկու խրատները.

ա. Ապահով ընկերութեան մէջ միտոյն են թարկէ՝ ինքզինքդ (եթէ օրինաւոր է) մագնիսական քնոյ։

բ. Բնաւ մի թողուր ինքզինքդ մագնիսական խաղերու ձեռքը։

Չորրորդ, մագնիսական քնոյ ազդեցութեան շնթարկութեւն համար կատարել գլխաւորապէս հետեւեալ պատուէրները.

— Միտքդ և աչքերդ միշտ շարժման մէջ պահէ։

— Երեւոյն լուսազօյն միջոց է չքնանալու։

— Ծաղրելի, արհամարհելի՝ անյաջող կ'ընեն մագնիսացընողին ամէն փորձերը։

Եւ եթէ գործադրես այս ամէնը, Նանսիի, Պորտոյի և Փարիզու ուսուցիչներն միանգամայն չեն կրնար մագնիսացընել զքեզ։

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ

Նախընթաց գլուխներուն մէջ մեր ըսածներն բաւական զաղափար մը կու տան թէ՛ մագնիսական քնոյ, թէ՛ զայն առաջ բերելու միջոցներուն վրայ, դարձեալ՝ քնոյ ենթարկեալ անձանց մէջ առաջ եկած արդասեաց վրայ։

Ստուգելու գեղ շատ հրաշալիքներ կը պատմուին մագնիսական քնոյ մասին, զոր օրինակ, զաղափարաց փոխանցումն, հեռուէն իրարուն հետ հաղորդակցութիւն, տեսութիւն ուրիշներուն խորհրդաց, ծանօթութիւն և նախազուշակութիւն ապագայից, և այլն։ Բայց ասոնց վրայ պիտի չխօսինք երկու պատճառաց համար.

Նախ՝ որ ամենէն աւելի նշանաւոր մասնագէտք կ'ընեն այս մասին՝ թէ այդ երեւոյթներուն ստույգ գոյութիւնը դեռ ապացուցուած չէ ճշդիւ և զիտնականօրէն։ Այն շատ բա-

1. L'hypnotisation forcée ou contre la volonté arrêtée du sujet. Premier Congrès international de l'hypnotisme, p. 317.

ներ կը կարգադրէր զանազան դրոշմ¹ և հան-
դիսից² մէջ, և ծանօթ են մեզի երեք անգ-
ղիացի, Gurney, Myers, Podmore³, գիտ-
նականաց փորձերն, Օքսֆորդի⁴ շատ յաջող
վէպերն, Պետրոս Ժանէլի⁵ ապագացանե-
լու նորանոր ջանքերն, այլ այսու հանդերձ,
վերոյիշեալ երեւոյթներուն վրայ տարակոյսն
կը ձգէ իւր քողը, և արդի դիտնոց շատերն
յօժարամիտ պիտի միաձայնին ըսելու Ռե-
քամիէլի առ Տիւփօթէ ըսածը. «Դիպիւներ
եմ, բայց չեմ համոզուած»:

Երկրորդ, թէպէտ և ստույգ ալ ըլլայ այս
երեւոյթներուն զոյւթիւնը, կը մնայ դեռ եւս
հաւաստել՝ թէ անոնք մագնիսական քնոյ
արդասիք են կամ թէ անոր կը վերաբերին:
Որովհետեւ, քիչ իրաւամբ կրնանք այդ ե-
րեւոյթները ներկայացընել իւր յատկութիւնը
մագնիսականութեան, երեւոյթներ՝ զորս չեն
ստուգած հոշակաւոր մագնիսացընողք, և ոչ
ալ յառաջ բերել կրցեր են: Աւասիկ Պէրն-
շայմի, յամին 1890, դրածն⁶. «Աքանչե-
լիք մը, օրինակ իմն, նախատեսութիւն ա-
պագայի, ներքին տեսութիւն, հեռուէն, խիտ
մարմնոց մէջէն տեսութիւն, զգայարանաց
փոխադրութիւն, դիպոց բնազդաւմ, ըսելու
հարկ չկայ՝ երբեք չեմ տեսած»: Եւ յամին
1892, Քոքսնիսի օր մը հարցուցեր է նոյն
բոլշիկն՝ թէ արդեօք բնաւ հանդիպած չէ՞ վե-
րոյիշեալ հրաշալիաց զէթ միոյն. «Ոչ երբեք,
պատասխաններ է, և ոչ մէկ հատին»: —
«Բայց Տէր, ըսեր է նա, լրջութեամբ ջա-
նացեր ես այս երեւոյթները տառաջ բերել»: —
«Այո, պատասխաններ է, ջանացեր եմ,
փորձեր և յօդներ եմ, և այս տեսակ բան
չեմ կրցած բնաւ առաջ բերել»: Տօքզ.
կրտսէ Մոնիէլիէլի նոյն պատասխանը
տուեր է բառ առ բառ: — Փարզու մագ-
նիսացընողքն, Շարքոյ և աշակերտներն⁷,

նոյնպէս կը խօսին: Ուրեմն անտեղի է ան-
ստույգ իրողութեանց վրայ երկարաբանին:

Մեր նպատակն զուրս է նաեւ խօսիլ հոս,
ինչպէս կանխաւ ծանուցինք Յառաջաբանին
մէջ, բուն մագնիսականութեան (*magneti-*
sme), հոգեստեսութեան (*spiritisme*), և ծած-
կատեսութեան (*occultisme*) վրայ, վասն զի
ստոնց ամենուն վրայ միանգամայն խօսիլէն՝
զաղափարաց խառնակութիւն կը ծնանի, և
անոնք առանձին ուսումնասիրութիւն կը պա-
հանջեն: Ուստի խօսքն է ցարդ, և ասկէ
յետոյ ալ պիտի ըլլայ բուն մագնիսական
քնոյ վրայ (*hypnotisme*), զոր կը գործա-
դրեն մագնիսացընողք, և ըստ այնմ կը դնենք
հետեւեալ խորհրները.

Մագնիսական քոչնէ հակառակ է բարոյից:
Մագնիսական քոչնէ փաստակար է և չար:
Մագնիսական քոչնէ ստատապական է:

Այս երեք խորհրները, որք յուշեցին բու-
լոր աշխարհը՝ կարծեաց մեծ անմիաբանու-
թեան պատճառաւ, պիտի ջանանք ամփոփել
հետեւեալ պլաններու մէջ:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

Մագնիսական քոչոյ հակառակորդը
և ամոնց փաստերն:

Ա

Մագնիսական քոչոյ հակառակ պատերազ-
մողաց գիտաւորն է Հ. Ֆրանքոյ⁸, որոյ հրա-
տարակած յօդածոց համար կը զգէ անգ-
ղիական Հանդէսն The Lyceum. «Յօդա-
ծոց ընտիր շարք մը». թէպէտեւ յօդածա-
գրին հիմնական առաջարկութիւնը չընդու-
նիր: Ըստ Հ. Ֆրանքոյի կարծեաց, մագնի-
սական քոչնէ «մտանդաւոր է և փաստակար»: —
Այդ յօդուածներով ապա զիրք մը ձեւա-

1. Proceedings of the Society for psychical re-
search.

2. Annales des sciences psychiques, fondées par
les Drs Dariea et Richet.

3. Les hallucinations télépathiques.

4. De la suggestion mentale.

5. L'Automatisme psychologique, ch. III.

6. De la suggestion, p. 84.

7. Braid, Neuroypnologie, chap. additionnel,
p. 234.

8. L'Ipnotismo tornato di moda.

ցաւ, որ և թարգմանուեցաւ ի սպանիական և ի գաղղիական լեզուս: Իրմէ վերջը գրողք՝ գրեթէ կրկնեցին նոյն փաստերը:

Նա՛ իւր գրութեան հին կը զնէ այսպէս. «Մագնիսական քնոյ տեսական բնութիւնն ինչ որ ալ ըլլայ, կրնանք միշտ ըսել՝ թէ այն՝ Հիւանդութիւն մը, կամ ախտաւոր վիճակ մ'է»: Էւ սպա ուժգին տրամաբանաւ կանով մը, միշտ գիտնական Հետազոտութեան վրայ հաստատած, այս խիստ հետեւանքը կը հանէ. «Մագնիսական քունն՝ արտաքոյ բնութեան երեւոյթ մ'է, իսկապէս փաստակար, իսկապէս անբարոյական և սաստանայական»:

1. Արտաքոյ բնութեան երեւոյթ մ'է, կ'ըսէ. «Վասն զի այլ մագնիսական քունն յառաջ պիտի գայ բնական կերպով կամ հետեւով մը և կամ մագնիսացող ենթակային երեւակայութեան. արդ նախ՝ հեղուկ չի կրնար անոր պատճառ ըլլալ, որովհետեւ կան գէպեր ալ յորս մարդ մը կրնայ ինքզինքը ենթարկել այդ քնոյ, Հետեւաբար՝ իրեն հեղուկ մը չանցնիր օտար մագնիսացողէ. երկրորդ՝ ենթակային երեւակայութիւնն ալ չի կրնար պատճառ ըլլալ այդ քնոյ. վասն զի բնական քնոյ մէջ եղողք ալ կ'ենթարկուին մագնիսութեան, ինչպէս վերագոյն տեսանք. և գիտենք եւս որ՝ մագնիսացողք՝ իրենց ենթակայէն կը պահանջեն միայն որ իջնանին մագնիսանալու: Ուրեմն եթէ այդ երկու բնական պատճառներն առաջ չի կրնար գալ մագնիսական քունն, Հետեւաբար՝ բնութեան կարգէն և օրէնքէն դուրս բան մ'է»:

2. Յորանքոյ բաւական չհամարելով այդ համառօտ փաստը, կ'ընդարձակէ իւր առաջարկութիւնը և կ'ըսէ. «Բաց ի հեղուկէ և երեւակայութենէ մէջ կը բերուին ուրիշ պատճառներ՝ որք առաջ կը բերեն մագնիսական քունը, զոր օրինակ՝ են լուսաւոր կէտի մը վրայ սեւեռել աչքը, միակերպ շարունակ նոյն ձայնը լսելը, կամ յանկարծական բռնութիւն մը, կամ կանխաւ եղած տրամադրութիւնը ենթակայից: Սակայն ասոնք ալ չեն կրնար մագնիսական քնոյ պատճառներն ըլլալ. որովհետեւ չկայ համեմատութիւն արգասեաց և անոնց պատճառին մէջ. վասն զի

այսքան փոքր և թեթեւ պատճառներ ինչպէս կրնան այնպիսի մեծ և ծանր արգասեաց առաջ բերել՝ որ ենթական կորսնցնեն իրեն զգայութիւնը, միտքը, և այլն: Անոր համար, Պրէտ և Շարքոյ խոստովանեցան՝ թէ չեն կրնար այս երեւոյթներուն պատճառը բացատրել»:

«Դարձեալ, կը շարունակէ նոյն Հ. Յորանքոյ, մարդկային կամքն եթէ այդքան մեծ ազդեցութիւն և զօրութիւն ունի ուրիշներուն վրայ, ինչո՞ւ նոյն ազդեցութիւնը միայն մագնիսական քնոյ մէջ պիտի ամփոփուի: — Թեւապրութիւնն ալ, որ իբրեւ պատճառ կը համարուի մագնիսական քնոյ, ինչո՞ւ այս ինչ մարդու ձեռքով կ'ազդէ քնանալի ենթակային վրայ, իսկ ուրիշի մը ձեռքով շարգեր. եթէ բնական պատճառ մ'է այն, հարկ է՝ որ ամէն մարդու ձեռքով նոյն արգասեացը առաջ բերէ, ինչպէս կրակն կ'այրէ՝ եթէ ո՞ր և է մարդու ձեռքով յարդի վրայ ձգուի: Ուրեմն թեւապրութիւնն ալ բնական պատճառ չի կրնար ըլլալ մագնիսական քնոյ: Ապա ուրեմն բնութեան դաշտ Հիւանդութիւն մը, արգասեաց մ'է մագնիսական քունն»:

2. Մագնիսական քունն վնասակար ալ է առողջաբեան: Պրէտ ինքն կը խոստովանի այս ճշմարտութիւնը գրելով այսպէս. «Տգնեցնելուն ձեռքը խաղալիկ պէտք չէ որ ըլլայ մագնիսութիւնն՝ սոսկ Հետաքրքրութեան համար... Ստատիկ կերպով դատապարտած եմ՝ անոր գործածութիւնը անոնց քով՝ որք բժշկութեան մէջ էմուտ չեն»: Շարքոյ, Պաշտ Ռիշէ, Ծանաւորաւոր և այլք կը խօսին յայտնի՝ մագնիսական քնոյ վտանգներուն վրայ: Եւ յիշատի, քանիներ խենթեցած են մագնիսական քնոյ ենթարկուելէն յետոյ. քանիներ ծանր Հիւանդութիւններու ենթարկուած են: Այդ պատճառաւ արգիւրուեցաւ անոր գործածութիւնն մի քանի տարիներէն մէջ, իբրեւ հակառակ ժողովրդեան սողուն շուքներ:

3. Մագնիսական քունն անբարոյակա՞ն է: Այս կան յայտնի է այնու՝ որ երբեք ներքի չէ որ մարդ մը կամաւորապէս ինքզինքը զրկէ իւր բարոյական ազատութիւնն, ինչպէս որ կը տեսնենք մագնիսական քնոյ

գործադրութեան մէջ։ Այս կէտն իբրեւ ծա-
նօթ եւ ապացուցուած մաս մը՝ քաղաքա-
կանացեալ ազգաց օրինազրոյց մէջ անցած է։

Ք

Հ. Յրանքոյի այս կերպ գրութիւնն շա-
տերուն մտքերը յաղթահարեց եւ համազեց
զանոնք։ օրինակ իմն, իրեն համակարծիք
եղան Մորոյ, Կրանքլոտ, Քլալիթ¹, սօքր-
իմպէր — Կուրպէր², եւ իրենց վարդապետին
նոյն փաստերը կրկնեցին։ Անտարակոյս ա-
սոնց իւրաքանչիւրն զրեց կամ խօսեցաւ ի-
րեն մտաց սրովմեան եւ համոզմունքով աստի-
ճանին համեմատ, բայց ամէնուն ալ դազա-
փարեներն ու փաստերն կը վերածուին քիչ
շատ Հ. Յրանքոյի վերոյիշեալ մէջ բերած
եղբը կէտերուն, այսինքն թէ՛ մագնիսական
քունն, բնութեան վեր կամ արտաքոյ բնու-
թեան բան մ'է, անբարոյական եւ վնասա-
կար։ Եւ այս հեղինակներն ալ հետեւեալ
կերպով կ'ընդլայնեն Հ. Յրանքոյի գաղա-
փարները։

1. Արտաքոյ բնութեան եւ մագնիսական
քունն. — Նախ, վերադոյն տեսանք որ բառ
Հ. Յրանքոյի, մագնիսական քունն չի կրնար
յառաջ գալ հեղուկէ մը կամ երեւակայու-
թենէ. ուրիշ ուրիշ քնական պատճառներէ
կրնայ այն առաջ գալ, յանկարծական ձայ-
նէ՛, յռասառք կեսի մը վրայ ալքերը սեւե-
սեւէ՛, եւ այլն. վերագոյն ըսինք ասոնց մա-
սին ալ թէ չեն կրնար պատճառ ըլլալ մագ-
նիսական քնոյ, վասն զի անոնց եւ մագնի-
սութեան մէջ համեմատութիւն չկայ։

Երկրորդ, դիաբոլիզմ կամ կախարդանք
(fascination) եւ չի կրնար առաջ բերել այդ
քունը. վասն զի ծաղրական չէ՛ ըսել՝ թէ
մեր վերք յիշատակած այնքան փորձերու
մէջ ի Միլան, Մոնփէլիէի, եւ այլն, Տօնաթոյ
եւ ուրիշներն դիւթեցին այնքան հուժկու եւ
րիտասարդաց, պորձաւորաց, ուսանողաց,
խմբագիրներու, պիտուններու, ուսուցչինիւրու,
զինուորաց եւ սպաներու բազմութիւնը. եւ միթէ

այսչափ մարդիկ այդ մէկ քանի շատախօս-
ներուն ազդեցութեամբ դիւթուեցան։ Կարե-
լի չէ այդ։

Երրորդ, ծաղրական է նոյնպէս պնդել՝ թէ
քնանալի ենթականերն նախապատրաստ
տրամադրութեան մէջ են քնանալու։ Որով-
հետեւ Տօնաթոյի քնացուցած այնքան են-
թասականներն, քսան ուսանողներն, քառա-
սուն սպաներն, ասոնք ամէնքն ալ կանխաւ
տրամադրուած էին, չղացան ունէին, միթէ
մագնիսութեան շարին հոնաւը ունէին...

Հետեւաբար ուրեմն մագնիսական քնոյ
այս ամէն բնական պատճառ համարուած-
ներն չեն կրնար բացատրել այս քունը։ Եւ
զարմանալի չէ այդ. որովհետեւ բնախօսու-
թենն ալ, բնագիտութենն ալ դուրս իր մ'է
այն։ — Մագնիսական քունն է հիւանդու-
թիւն մը՝ որ բնական չէ իրեն պատճառնե-
րուն մէջ։

Վերոյիշեալ դիտականք՝ մագնիսական
քնոյ պատճառներուն վրայ այսչափ խօսելէն
ետք՝ կ'անցնին նոյն մագնիսական քնոյ
ախտանշաններուն կամ երեւոյթներուն վրայ
խօսելու, եւ կը պնդեն թէ այդ երեւոյթներն
ալ՝ որ մագնիսական քունն առաջ կու գան,
չեն բնականը։ Եւ յիշուի, կ'ըսեն, երկու
պատճառներու համար բնական չեն այս
տարօրինակ երեւոյթներն, նախ՝ որ յան-
կարծակի առաջ կու գան. երկրորդ, վասն
զի մարդկային կամքէ կախումն ունին։

Եւ ենթադրենք, կը յաւելուն, որ այս
երեւոյթներն իրենք իրենց մէջ նկատուելով՝
բնական ըլլան, բայց դիտելի կարեւոր կէտն
այդ է՝ որ անոնց առաջ գալուն կերպը բնա-
կան չէ։ — Ստուգիւ, ըմբիւն եւ ոչ ըմբիւն
ալ գիտեն՝ որ ամէն ախտ կամ որ եւ հի-
ւանդութիւն ունի իրեն նախընթաց նշաննե-
րը, եւ կանխաւ քիչ շատ կ'իմացուի որ հի-
ւանդութեան ճգնաժամը կը հասնի։ Իսկ
մագնիսական քունն այսպիսի կանխանշան-
ներ ամենեւին չունի, այլ յանկարծ, օրի-
նակ իմն, կը տեսնեն զօրաւոր, պնդակազմ,

1. Etude sur l'hypnotisme.

2. La stigmatisation etc.

առողջ երիտասարդ մը՝ որ քնացեր է մազ-
նիստութեամբ, և վայրկեան մը հտըր բոլո-
րովին կորսնցուցեր է զգացողութիւնը, և կամ
չափազանց զգացողութեան տէր եղեր է. և
անոր ամէն զգափարսներն խանձակ են և
անկարգ. որ բանդազողէ և կը բնաշըջի :
Եւ նոյն երիտասարդն յաջորդաբար այնպիսի
ախտաւնշաններ կ'ունենայ՝ զորս կրնան ու-
նենայ տանն հիւանդը, որոնք իրարմէ տանն
տարբեր հիւանդութիւններ ունենան : Իսկ
երբոր այդ հիւանդութեան ձգնաժամն կը հաս-
նի, Բնչ կ'ըլլայ, — ահաւասիկ մազնիսացը-
նողն կը փէ անոր երեսին. և նոյն վայրկեանին
նա սղջ առողջ կը կանգնի : — Բնական է
ուրեմն՝ որ այդպիսի ծանր ախտաբանական
երեւոյթներն տեսնուի և աներեւութանան
վաղեկեմի մէջ, — թէ՛ ոչլաւիտը վնճո տան :

Այո՛, կ'ըսեն, մազնիսական քնոյ բնական
ըլլալուն պաշտպանը և մէջտեղ կը բերեն քե-
լադրաբիւնը : Բայց այդ եւս չարմէ քնչ. վասն
զի նախ՝ վերագոյն տեսանք որ մազնիսա-
կան քունն առաջ չի գար բնական կերպով .
— երկրորդ, թեւադրութիւնն ալ չի կրնար
բացատրել մազնիսութեան ներկայացուցած
երեւոյթները : Վասն զի կրնայ թեւադրու-
թիւնն բացատրել մեզի՝ որ մազնիսացեալն՝
Բնչակէ մազնիսացընողին ձեռքը կատարեալ
ինքնաշարժ գործի մ'է, որ կը քալէ, կը կե-
նայ, կը նստի, կ'ելլէ, կու լայ, կը ծիծաղի,
կը կորսնցընէ և կը վերատաանայ լսելիքը,
ճաշակելիքը, տեսանելիքը, իմանալով և ճա-
շակելով չեղած բան մը, չիմանալով և չճա-
շակելով եղածը : Այ, ոչ. թեւադրութիւնն չի
կրնար մեկնելու այս ամէնը : « Այսպիսի
ստոյգ և ճշմարիտ է որ ցնդեաց վրայ որ և է
Ֆիզիքական փոփոխութիւն առաջ բերելու հա-
մար՝ կարելոր է Ֆիզիքական պատճառ, և
ոչ՝ քաղցրական պատճառ, քնչալիսի է թեւա-
դրութիւնն : Որովհետեւ մարդս որպէս զի բան
ալ ըզայ, հարկ է որ նիւթապէս զգալի իրն
ալ ըլլայ, և կամ զգայարանըն պիտի փոխէ
էւր բնութիւնը այնպէս որ չեղած բան մը
կարենայ զգալ իբրեւ թէ իրոք ըլլար. իսկ
արդ զգայարանը չեն կրնար փոխել իրենց
բնութիւնը թեւադրութեան ձեռքով, քնչակէս
որ այդ ինքնիրեն յայտնի է, ուրեմն թեւա-

դրութիւն չի կրնար առաջ բերել մազնիսա-
կան քնոյ յարակից երեւոյթները : — Բաց
աստի, եթէ քեւադրաբիւնն է բնական պատ-
ճառ այդքան երեւոյթներուն, հարկ է՝ որ
միշտ և ինքնաբերաբար գործէ, քնչակէս որ
և է բնական պատճառներն կը գործեն. օ-
րինակ իմն, կարիք միշտ կ'այրէ. իսկ բնոյ
հակառակն է թեւադրութիւնն. վասն զի մազ-
նիսացընողն կը թեւադրէ ենթակայ մը, և
սա կը հնազանդի տնոր հրամանին, բայց
հան ներկայ եղող բերաւոր հանդիսատեսից
և ոչ մին կրնայ նոյն ենթական թեւադրել :
Ուրեմն Բնչակէ կը մեկնուի այդ՝ որ նոյն
բնական պատճառն կը գործէ մէկու մը ձեռ-
քով, իսկ մէկային ձեռքով չի գործեր » :

Դեռ աւելին կայ. ամենէն աւելի փորձ
բժշկներուն հարցընենք, և պատասխանեն
մեզի՝ որ արդեօք սոսկ խօսքով մը, պարզ
հրամանով մը կրցնի են բժշկել զիտոյ ցաւ
կամ սաստիկ ջերմ, կամ դապրեցընիլ զօ-
րաւոր զատանցանք (delire) : Իսկ մազնիսա-
կան քունն ամէն ժամ կը գործէ այս գոր-
մանալիքը. մազնիսացընողն կ'ըսէ իրեն հն-
թակային. « Սաստիկ զիտոյ ցաւ ունիմ ». և
յիբարել կը սխի նա զգալ զայդ. — վայր-
կեան մը հտըր կը յաւելու. « Այլ եւս չես
զգար զայն ». և ստուշիւ, ցաւն կը հալա-
ծուի : — Փորձն առաջ կ'երթայ. « Պարտիզի
մը մէջ, մարդպետնի վրայ ես . . . Օձերն
պատեր են շորս կողմ. — Առիւծ մը վրայ
կը յարձըլի . . . Ձիւնուրական երաժշտու-
թիւն կայ . . . Ձիւնուրաց զունդ մը կ'անցնի » .
այս խօսքերուն վրայ ենթական վեր ի վայր
կ'ըլլայ : Բայց հազիւ թէ վրայ կը բերէ մազ-
նիսացընողն : « Այլ եւս բան չկայ, բան չես
տեսներ ». նա կը խաղաղի և կ'անցնի ձգնա-
ժամն. — Միթէ ոչլ ամէն բան թեւադրու-
թեամբ կը կատարուի, միթէ կը բուէ՛ ըսել
միայն մէկու մը. « Յիմար ես, կը զատան-
ցես, հիւանդ ես, առողջ ես », որպէս զի նա
յիմարի, գառանցէ, հիւանդանայ կամ ա-
ռողջանայ : — Բաց աստի, վերն եւս ըսինք,
եթէ թեւադրութիւնն է բնական պատճառ այս
ամէն գործոց, քնչակէս որ և է մարդ նոյն բնա-
կան պատճառով չի կրնար նոյն հրաշալի
գործերը կատարել :

Ուրեմն, կը կնքեն մագնիսական քնոյ Հա-
կառակորդը, րնոտքենէ զոտք բան մ'է մագ-
նիսական քունն, — և ապա կը յաւելուն՝
թէ

2. Մագնիսական քունն՝ վնասակար է
առողջութեան։ Եւ յիշուի, կ'ըսեն. Պրէտ
անգամ կը գրէ. «Ազդողագոյն կերպով միշտ
գատապարտած եմ մագնիսութեան գործ-
ածութիւնը բժիշկ չեղողներուն ձեռքը», և
Շարքոյ, Լիւի և այլք, մագնիսական քնոյ
վտանգներուն վրայ սաստիկ կերպով կը խո-
սին, և Հետեւեալ վէպքերն կը Հաստատեն
ասոնց բաժնեբեր։

D.r Benedekt Վեննայի, մագնիսացը-
նոց կը պատմէ՝ թէ իրեն աշայ առջեւ օր
մը քնացողքն են Քասանոյ մը, և ասոր
մէկ աչքը կուրցոյր է, միւսն՝ շլացոյր. — և
երկայն ժամանակ ետքն ալ կտրելի չէ եղած
բժշկել։ — Ուրիշ քսանաժող երիտասարդ
մը յիմարեր և ի Մոնիէլլէի, Վէրպէրի ձեռ-
քով մագնիսանալով։ — Դեռ Հազարու մէկ
ստոյգ Հանդիպած դէպքեր կը պատմուին
Միլանու, Հոմայ, Թուրինի, Նէապոլոյ մէջ
և ուրիշ տեղեր, այնպէս որ Աւստրիա, Իտա-
լիա, Հոլանտա, Պելճիքա, և այլն. մագնի-
սական քունը վտանգաւոր հրատարակեցին,
և արդիւնցին՝ անոր Համար եղած Հասարա-
կաց գումարումները։

Այլ, կը յաւելուն եւս, եթէ մաղնիսա-
կան քունն միայն առողջութեան վնասէր,
նուազագոյն չարիք կ'ըլլար, բայց ստոյգ է
և մեծագոյն չարիք՝ որ այն՝

3. Անբարոյական է բացարձակապէս։

Եւ յիշուի, վասն զի նախ՝ երբեք ներե-
լի չէ որ մարդ մը ինքզինքը կամաւորապէս
գրկէ իրեն ազատութենէն. — այս սկզբունքն,
որ իմաստասիրութեան մէջ յովին ապա-
ցուցուած է, այնչափ ճշմարիտ և Հաստա-
տուն է՝ որ ամէն քաղաքականացեալ ազգեր
զայլ անցուցած են իրենց Օրինապարտ մէջ։
Որովհետեւ ամէն ողջմարտ մարդ կը զգայ
կատարեալ Համոզմամբ մը՝ որ թող աւրուած
չէ իրեն մտաց լոյսը կամաւոր կերպով մա-
րոն և գիտակցութիւնը խզուել. վասն զի ա-
ռանց այս երկու կարողութեանց ո՞ր և է մարդ
անտարբեր կ'ըլլայ ուզելու բարին՝ զոր պէտք

է կատարել, և անտարբեր՝ մերժելու արդի-
լուած չարը։ Այս պատճառաւ ամէն տեղ
արգիլուած է գինովութիւն, և այլն. — Այս
ճշմարտութիւնը ամենէն աւելի վայրենի մար-
գու այնչափ յայտնի է՝ որ նա անգամ կ'ըմբռնէ
ուղատուութիւնը կորսնցընելուն մեծ չարիք ըլ-
լալը. որովհետեւ մարդս կ'ըլլայ առանց ա-
զատ կամաց՝ անտանց նման։

Ի զուր է մագնիսական քունը պաշտպա-
նել, կ'ըսեն, քլոսակերպի գործածութեան
ձեռքով, որով կը թմրեցընեն Հիւանդները։
Վասն զի, նոյն իսկ քլոսակերպի գործածու-
թիւնն յինքեան աղօթինաւոր է, ի բաց ա-
ռեալ ամենամեծ Հարկի դէպքը, և միշտ պա-
Հանջելով ամէն կարեւոր զգուշութեանց գոր-
ծադրութիւնը։ Եւ այս պարագային մէջ՝ վայր-
կենական չարեաց տեղ, ինչպիսի և ազատու-
թեան առկա լինալն, տեսական մեծ բարիք
տալը գալն, զայն օրինաւոր կ'ընէ. — Բաց
ասան, ամենամեծ տարբերութիւն կայ քլոսա-
կերպի և մագնիսական քնոյ մէջ. վասն զի
քլոսակերպի զհիւանդը բիւրաւոր վտանգներու
շնիթարիք, ինչպէս որ կ'ընէ մագնիսական
քունն. — քլոսակերպի յառաջ կը բերէ խոր
քուն մը և փրկարար անդգայութիւն, որուն
մէջ Հիւանդն ո՞ր և է ցաւ չըզգար, բայց չի
կրնար ալ գործել ո՞ր և է չար։ Իսկ մագ-
նիսութեան մէջ ասոր Հակառակն է բոլորա-
վին, որովհետեւ քնացող ենթակային գոր-
ծունութիւնը չափէ գուրս կ'անի մագնիսու-
թեան ազդեցութեան տակ, և ցնորմանց և
զառանցանաց մէջ կը գործէ նա կուրօքն՝
արտաքին թելադրութեան գերի եղած։ Ո՛ր
և է անձնական անկարգ գործ կրնայ անոր
հրամայուիլ։ չկայ եղեոնագործութիւն մը՝
որուն ձեռք չգարնէ, բաւական է՝ որ իրեն
հրամայուի։ — Եւ այլ Հաստատուն ճըշ-
մարտութիւնը կը Հաստատեն բժիշկը ալ,
որոց մէջ մին՝ Տօքզ. Լամպրոզոյ՝ այսպէս
կը գրէ՝ յաճախ մագնիսութեան ենթարկուող
անձանց վրայ. «Ապացուցուած է՝ որ այդ
անձինք դիւրաւ կ'ըլլան խարդախը, անբա-
րոյականը, և կամ գէթ այնչափ տկարը՝ որ

ոչ միայն թեկադրողին այլ և ուրիշներուն աւանդութիւնն հրապուրանաց ալ տեղիք կու տան»։ Եւ եթէ ճշմարիտ է այս, «ի՞նչ եղանակաւ գործութիւններ չեն կրնար մագնիսացնողը և այլք՝ գործել տալ երիտասարդաց, աղայոց, և այլն. — ո՞ր կը յիշայ այն ատեն անհատին, ընտանեաց, նոյն իսկ ընկերութեան առաջնութիւնը»։

Հակառակորդը մագնիսական քնոյ այսպէս մանրամասնօրէն ապացուցանելով՝ թէ մագնիսական քունն՝ բնութեան գործը, վնասակար, և անբարոյական է, կը հետեւցընեն՝ թէ սրբեմն աստուանական է, այսինքն՝ սատանային ազդեցութեամբ առաջ կու գան մագնիսական քնոյ ձեռքով կատարուած բոլոր զարմանալի գործերն։ Այդ պատճառաւ հմուտ բժիշկը և մագնիսացրողը չեն կրնար բացատրել թէ ինչպէս մագնիսական քունն այսպիսի երեւոյթներ կու տայ։ Եւ մեր այս կարծիքը, կ'ըսեն, կը հաստատուի նաեւ այդ զիտելի կէտն ալ՝ որ մագնիսական քնոյ պաշտպանը մեծաւ մասամբ յայտնի անհատաւ են և ամբարիշտը, ինչպէս Ռիշէ, Ֆիկիէ, Սէփրիլի, Դարբոյ, Տօնաթոյ, Մորսէլլի, և այլն. — Մագնիսական քունն կ'ենթադրէ և կամ՝ առաջ կը բերէ զանհաւաստութիւն։

Այսպէս կը խօսին և կը գրեն և այսչափ փաստեր կը բերեն հակառակորդը մագնիսական քնոյ։ — Յաջորդ զլիւս մէջ պիտի տեսնենք՝ պաշտպաններուն փաստերը ի նըպատ մագնիսական քնոյ։

Շարայարելի

Հ. Ս. ՍԱՐԵԱՆ



ՀԱՆԴԵՍ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

1. — Քանանացական խնդիր. Համառօտ ակնարկ Արիստակէս եպիսկոպոսի (Սեդրակեան)։ Մոսկուա. 1900.

Քանի մը տարի առաջ լրագրիք և ամսագիրք Քանանացական խնդիր տիրադոսով հրատարակեցին այլ և այլ յօդուածներ, մերթ եւս իրարու հակառակ կարծեօք. բայց Սեդրակեանի

կեանի իմաստներն ու կարծիքներն ամէն տեղ արձագանգ տալով ընդունելութիւն գտան՝ գոցէ նոյն իսկ այս տեսակ խնդրոց կարեւորութիւնը շուտօրէն։ — Արդ ներկայ բաւական ծաւալով գիրքս Արիստակէս եպիսկոպոսին՝ իւր թեմական այցելութեան ժամանակ սնեցած զգացումները, քննութիւնները, խորհրդածութիւնները ու զարգացարները կը բովանդակէ։ Ի սկզբան կը նկարագրէ Եւրոպի, Տարեւու, և այլն, եկեղեցական կարգաց ու անձանց և եկեղեցեաց խեղճութիւնը, անկումը և խարխուլ վիճակը, եկեղեցականաց յետին աստիճանի ազդեցութիւնը, որը մինչեւ կարգաւ անգամ չեն գիտեր։ Այս ամէն բանի վրայ ցաւալից սրտով տեղեկութիւն կու տայ յիշմիածին, և այդքան թշուառութեան զարման տանելու միջոցներ եւս կը ցուցնէ։

Մենք ուրախ ենք որ կրցեր է հեղինակն յաջողութեամբ պարզել և նկարագրել այդքան քահանայից, և այլն, խեղճութիւնը, որք Ս. Լուսաւորչայ որդիք ենք ըսելով՝ պահժան յանձնէս, հեռի անոր հոգիին ու իմաստներին և հոգեւորն զիտութիւնն և բայց ներսի այսքան միայն խորհրդածել՝ որ այդ խաւարամած ազդեցութիւնն ու աղէտք նոր բան չեն, այլ հինգած, փոտելու մօտ՝ փոտեցնելով զայս։ Զարմանք են երբ զեւ հիմա կ'իմանայ զայդ իշմիածին եկեղեցականութիւնն, մինչդեռ մենք իսկ Եւրոպայի մէջ հանդիպեր ենք մի անգամէն աւելի այցելու աղէտ հայ եկեղեցականաց, որոնք անպատիւ կ'ընեն իրենց սրբապան դրոշմը։

2. — GEISTLICHES UND WELTLICHES AUS DEM TÜRKISCH-GRIECHISCHEN ORIENT. — Selbsterlebtes und selbstgesehenes von Heinrich Gelzer. Leipzig. 1900.

Պատկերազարդ, 253 էջ գերմաներէն երկասիրութիւն մ'է ծանօթ հայազէտ Գեղեցիկ, յորում հեղինակն կը գրէ պարզ ոճով իրեն տեսածները ու հանդիպածները՝ յարեւելս ուղեւորութեան ժամանակ։ — Առաջին մասը

Ա. կը սկսի Յունաց եկեղեցականութեան